Լուսնըկի լուսը (դանդաղ տարբերակ)

Լուսնըկի լուսը, արտերի բուսը, օ՜յ, օ՜յ,
Յարըս ջահել է, քընի գը դուսը, օ՜յ, օ՜յ:

Յարս ջահել է, սարի ծաղիկ է, օ՜յ, օ՜յ,
Մեր գեղի բերնի անուշ խաղիկ է, օ՜յ, օ՜յ:

Աչքս սարերուն, սիրտս ջրերուն, օ՜յ, օ՜յ,
Հավքն ու հովերը ինձ լուր չեն բերում, օ՜յ, օ՜յ:

Կանչեմ յար, արի, յարս ձեն չի տա, օ՜յ, օ՜յ,
Ընկե քաղցր քուն, անունս էլ չի տա, օ՜յ, օ՜յ:

Յարիս տարել են, սիրտս վարել են, օ՜յ, օ՜յ,
Տունս ավեր է, դարդըս սարեր են, օ՜յ, օ՜յ:

Թող Տիրամերը մեր ձենն իմանա, օ՜յ, օ՜յ,
Բալքի մեր համար մե դուռըմ բանա, օ՜յ, օ՜յ:

Լուսնըկի լուսը (արագ տարբերակ)

Լուսնըկի լուսը, արտերի բուսը, օ՜յ, օ՜յ,
Յարըս ջահել է, քընի գը դուսը, օ՜յ, օ՜յ:

Աչքըս սարերուն, սիրտս ջըրերուն, օ՜յ, օ՜յ,
Սար ու ծովերը էլ լուր չեն բերում, օ՜յ, օ՜յ:

Լուսնըկի լուսը, արտերի բուսը, օ՜յ, օ՜յ,
Յարըս ջահել է, քընի գը դուսը, օ՜յ, օ՜յ:

Լուսնակը նորել է

Լուսնակը նորել է, լավ լուս չի տալիս,
Յարըս խռովել է, վա՜յ, բարև չի տալիս:

Կանաչ արտը հաց տարա,
Լուսնակը նորել է, լավ լուս չի տալիս,
Յարիս տեսա, ետ դառա,
Յարըս խռովել է, վա՜յ, բարև չի տալիս:

Կանգնել ես սարի տակին,
Լուսնակը նորել է, լավ լուս չի տալիս,
Սիրտս տվել կրակին,
Յարըս խռովել է, վա՜յ, բարև չի տալիս:

Յայլեցեն էկար բարով,
Լուսնակը նորել է, լավ լուս չի տալիս,
Սրտիս զարգեցիր քարով,
Յարըս խռովել է, վա՜յ, բարև չի տալիս:

Պաղ ախպուրից ջուր խմի,
Լուսնակը նորել է, լավ լուս չի տալիս,
Էրված սիրտս հովցրի,
Յարըս խռովել է, վա՜յ, բարև չի տալիս:

Լուսնակը նորել է, լավ լուս չի տալիս,
Յարըս խռովել է, վա՜յ, բարև չի տալիս: